

ԱՐԾԻՒ

ARDZIV

Բացառիկ - Դեկտեմբեր 2003

«Ուզում ես գուշակել,
տեսնել մի ժողովուրդի
ապագան՝ Գալի՛ր Երա
նիտասարդութեան»:
- Գարեգին Նժդեհ



ԴՊՂՈՒՄ



ԱՐԾԻՒ

ARZIV

«Արծիւ» Պաշտօնաթերթի Խմբագրական կազմ

Ընկ. Զաւէն Տէր Սահակեան,
Կ.Վ.-ի Ներկայացուցիչ

Ընկ. Ծանթ Գարայեան,
Խմբագիր եւ «Լեւոն Ծանթ»
մասնաճիւղի մօտ
Ներկայացուցիչ


Ընկ. Նանոր Նիկողեան,
«Բեկոր Աշոտ» մասնաճիւղի
մօտ Ներկայացուցիչ

Ընկ. Լոռի Աւագեան,
«Սիմոն Զաւարեան»
մասնաճիւղի մօտ
Ներկայացուցիչ

Ընկ. Ծափան Փանոսեան,
«Արամ Մանուկեան» մասնաճիւղի
մօտ Ներկայացուցիչ

3401 Olivar Asselin
Montreal, Quebec
H4J 1L5 Canada

Հեռ. 514-331-6548



ԻՊԳՄՊ-ՕՂ



Designed & Printed by
TriA Publications Inc.
November 2003
1st Special Edition



Table of Contents

Բովանդակություն

■ Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ.

Հ.Ե.Դ. - Հ.Յ.Դ.Գ.Ե.Մ. Պատմություն 27
«Բեկոր Աշոտ» Մասնաճիւղի Տասնամեակ. 29
Հ.Ե.Դ. 70 տարիներ արդէն 31

■ Խօսքեր

Կ.Կ.ի խօսք 3
Կ.Վ.ի խօսք 4
Խմբագրականի խօսք 2

■ Armenian Prelacy of Canada Ազգային Առաջնորդարան

Հայ Երիտասարդը եւ Հայաստանաց
Առաքելական Մայր Եկեղեցին 5

■ Հայաստան

Երիտասարդական-Ուսանողական
Ը. Բանակում- Հայաստան
Հայաստան, երկիր համայն Հայություն . . 8
Մեր ապագան 11
We are All One 18
Մեր ընտանիքի անդամները 20

■ Հեռացած ընկերներ, յաւերժացած յուշեր

Լիզպոնի 5 տղաքը 23
Ես մի զարկն եմ քո կողմ 25

■ Պատանի աչքերով

Թորոնթոյի Վարիշ Կազմի խօսք 40
Մեր պատանիները կը գրեն 41

■ Հայ Դատ

Rencontre avec la Ministre Courchesne 40

■ Member's Corner

Կեանքիս Ուխտը 49

■ Entertainment

Entertainment (Cover page)
Toronto Gets What it wants
from the Rolling Stones 52
Top Ten 56
Vodka Lemon 57

Նուիրատուութիւններ
Արծիւ Բացառիկին 58
Websites to visit 60

Խմբագրական

Համաշխարհայնացում, գիտութեանց յեղաշրջումներ, "Global village", տնտեսութեան ազատականացում: Այս բոլորը քսանմէկերորդ դարու իրականութիւններ են, որոնք մեր կամքէն անկախ, կ'ազդեն մեր կեանքին, ինչպէս նաեւ մեր ազգին ու հայրենիքին վրայ: Ծառ դիւրին է ըսել, թէ այս հարցերը երկրորդական են մեր գաղութին եւ ազգին համար: Սակայն ճշմարտութիւնը այն է թէ Հայ Դատի եւ հայակերտման աշխատանքին կողքին, այս նիւթերը պէտք է մնայուն կիզակէտ դառնան հայ երիտասարդի գործելակերպին եւ պահանջներուն, այս օտար ափերուն վրայ:

Այսօր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի Երիտասարդական Միութիւնը կ'ապրի վերաշխուժացման շրջան մը եւ այս իրողութեան զուգահեռ ականատես կ'ըլլանք նաեւ անոր մամուլի պշխուժացման: Գանատայի Երիտասարդական Միութեան «ԱՐԾԻԻ» պաշտօնաթերթը այս բացառիկով կը յայտնէ իր կամքը դառնալու գանատահայ երիտասարդին պայքարի, պահանջատիրութեան եւ գաղափարապաշտ շունչի թարգմանը, վառ պահելով մեր գաղափարաբանութիւնը եւ մեր ազգային արժէքները:

«ԱՐԾԻԻ» պաշտօնաթերթի խմբագրական կազմը կը հրաւիրէ բոլոր հայ երիտասարդները, Գարեգին Նժդեհի հիմնած շարժման եօթանասունամեակին առիթով, մասնակցելու իր առաքելութեան եւ տէր կանգնելու մեր գաղութի իրաւունքներուն եւ պահանջներուն մշտապէ՛ս:



Կեդրոնական Կոմիտեի Խօսքը

Մեր Խօսքը

«Ռազմիկ», «Հայրուկ», «Հոգի», «Կայծեր», «Հայաստան»: Օրինակներ են երիտասարդական թերթերու, որոնք տարիներ շարունակ աշխատանք տարած են, որ մեր ժողովուրդին մէջ տարածեն այն տեղեկութիւնները, որոնք մեզ բոլորս կը կապեն հայրենիքին եւ հայութեան, ինչպէս նաեւ անոնց դիմագրաւած պայքարներուն:

Ահաւասիկ, այս թերթերուն կողքին, վերածնունդ մը կը փորձէ Հ.Յ.Դ. Գանատայի Երիտասարդական Միութեան «Արծիւ» պաշտօնաթերթը: Վերջին մի քանի տարիներու ընթացքին զգալի դարձած էր մեր գաղութին մէջ երիտասարդներու ուղղուած թերթի մը բացակայութիւնը: «Արծիւ»-ի այս բացառիկ թիով կու գանք վերահաստատելու Գանատայի երիտասարդութեան ներկայութիւնը մեր գաղութի մամուլի շարքերուն մէջ:

Այս թերթին նպատակն է գաղութին ներկայացնել մեր երիտասարդութիւնը, իր հին եւ նոր դէմքերով, ներկայացնել իր առօրեան, իր սովորութիւնները, ուրախ եւ տխուր վայրկեանները, ինչպէս նաեւ իր յանձնառութեան ճամբով արձանագրուած յաջողութիւնները:

Եւ այդ է առաքելութիւնը մեր միութեան: Դէպի յաջողութիւն, դէպի յաղթանակ: Այսօրուայ Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ.-ի աշխատանքի դաշտերը բազմաթիւ են եւ կը շարունակեն բազմանալ: Մեր մասնաճիւղերը կը գործեն դաստիարակչական, քարոզչական, կազմակերպչական եւ ներգաղութային զանազան մարզերէ ներս:

Այս բոլորի կողքին, ընթացքի մէջ են ծրագիրներ, ուր պիտի տեսնէք մեր միութեան համագործակցութիւնը ԱՄՆ արեւելեան եւ արեւմտեան շրջաններու մեր ընկերներուն հետ: Այս ծրագիրները Գ.Ե.Մ.-ի առջեւ պիտի բանան նոր դռներ ուր գործի պիտի դրուին մեր ընկերներու զոհողութիւնը, նսկիրումն ու համոզումը:

Նաեւ, ի մտի ունենալով մեր միութեան ծրագիրը եւ մեզի համար ուղի դարձած «Դէպի Երկիր» նշանաբանը, Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ.-ը իր բազուկները պիտի երկարէ դէպի հայրենիք, օժանդակելով արդէն իսկ գործօն հայաստանեան ծրագիրներու: Պիտի նախաձեռնէ նաեւ նորանոր գործեր միշտ նկատի ունենալով այն բնագաւառները, որոնք պիտի հասնին Հայաստանի եւ մեր Դատի անմիջական կարիքներուն, որոնք մեր կազմակերպութեան համար առաջնահերթութիւն կը նկատուին:

Այս բոլորին յաջողութիւնը կը պարտադրէ խիզախութիւն, թոյլք եւ կորով. յատկանշներ, որոնց տիպարն է արծիւը, տիպար մը որ մեր միութեան զինանշանին մէջ իր յատուկ տեղը գրաւած է: Այս է մեր ուղղութիւնը եւ ասոնք են յատկանշները, որոնք կը զատորոշեն Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ.-ը միւս բոլոր երիտասարդական կազմակերպութիւններէն:

Նոյն շունչով է որ այսօր կը գործէ մեր միութեան «Արծիւ» պաշտօնաթերթը: Այս անգամ մեր ընկերներու գրիչի ուժն է որ մեր միութեան ձայնը պիտի տարածէ այս գաղութէն ներս եւ ալլուր աշխարհի տարածքին:

Հպարտ ենք, ինքնավստահ, եւ հաստատամիտ մեր նպատակներով: Ահաւասիկ կրակը որ մեզ կը մղէ դէպի յաջողութիւն:



Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ԳԱՆԱՏԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ARMENIAN PRELACY OF CANADA
PRELATURE ARMENIENNE DU CANADA

**Հայ Երիտասարդը Եւ
Հայաստանեայց Առաքելական Մայր Եկեղեցին**

Վերելը դրուած խորագրին իւրաքանչիւր բառը իւրայատուկ պարունակ մը ունի եւ խորհողութեան ծալքեր կը բանայ մեր մտածումին:

Մարդկային իրականութեան մէջ բոլոր դարերուն եւ հաւաքակա-
նութիւններէն ներս Երիտասարդը եղած է եւ կը շարունակէ նկատուիլ
ժողովուրդներու գոյութիւնը սնուցանող, կեանքն ու մտածողութիւնը
յեղափոխող, մշակոյթն ու արուեստը վերանորոգող, իտեալներն ու
գաղափարախօսութիւնները շարժման մէջ դնող էատարը: Ժողովուրդ մը, որ
գրկուած է նման սերունդէ՝ կ'ապրի անեացման մութ վիճի եզրին:

Եւ քնական է, որ Երիտասարդութիւնը ըլլայ այդպիսին՝ եռանդուն,
խանդավառ, իտեալապաշտ, եւ նորարարութիւններու սիրահար:
Հակառակը պիտի ըլլար տիտուր եւ անյուսադրիչ:

Հասարակական ընկերային կեանքին մէջ եղած են եւ միշտ պիտի
գտնուին թաքուն ուժեր, որոնք՝ ինչպէս երկրի քնական հարստութիւններն ու
տնտեսութիւնը կը ջանան իրենց հակակշռին տակ պահել՝ կը փորձեն ու
պիտի շարունակեն փորձել իրենց հակակշռին տակ պահելով օգտագործել
կամ շահագործել Երիտասարդութեան այս անսպառ եւ հզօր
ուժականութիւնը:

Ընկերութիւն եւ Երիտասարդութիւն փոխյարաբերութեանց
ծրագրուած եւ համադաշն գործակցութենէն ծնունդ առած են մարդկութեան
մեծագոյն գաղափարներն ու բարիքները: Եւ սակայն եղած են եւ
անխուսափելիօրէն պիտի ըլլան սերնդային եւ մտածողութեան
հակադրութիւններ եւ հակամարտութիւններ՝ յատկապէս երբ նորը
անհամբեր է եւ ժամանակ չունի գաղափարներու փորձարկումին եւ հինը
նոր գաղափարներու անապահովութենէն սարսափահար կառչած կը մնայ
պահպանողականութեան: Բայց ոչ մէկ ատեն կարելի եղած է պատնէշներ
կանգնել Երիտասարդութեան եւ յառաջդիմութեան դիմաց:
Երիտասարդութիւնը յարատեւօրէն նորոգուող ապագան է մարդկութեան:

Բայց մենք գործածեցինք «Հայ Երիտասարդութիւն»
բացատրութիւնը: «Հայ» պիտակը կը գատորոշէ Երիտասարդութեան մէկ
հատուածը եւ անոր կու տայ յատուկ պատկանելիութիւն եւ գունաւորում՝
գայն կը գետեղէ յատուկ շրջագիծի մը մէջ:

«Հայ» Երիտասարդ ըլլալ կը նշանակէ ըլլալ զաւակը յատուկ
ժողովուրդի մը, ժառանգը՝ յատուկ պատմութեան մը, արդիւնքը՝ յատուկ
մշակոյթի մը: Հայ ըլլալու համար պետք է ճանչնալ այդ ժողովուրդը,
պատմութիւնը եւ մշակոյթը:

Ամենէն անգրագետ հայն իսկ երբ կը փնտռէ հայկական կերակուրը, երբ կը յուզուի հայ երգով, երբ հայկական առած մը կամ հեքեթ մը կը պատմէ, կը շարունակէ հայ արմատէն ընծիւղուած հարազատ ճիւղ մը ըլլալ:

Անշուշտ, որ կան «հայեր», որոնք պայմաններու եւ դէպքերու բերումով ակամաօրէն կամ գիտակից դիրքորոշումով անհաղորդ մնացած են կամ կ'անգիտանան իրենց հայու պատկանելիութիւնը: Անոնք անարմատ եւ ճիւղերէն փրթած տերեւներ են, որոնք յանձնուած են աշխարհի հովերուն ...:

Սակայն հոս խօսքը ՀԱՅ երիտասարդութեան մասին է՝ այսինքն այն սերունդին որ հայութեան ապագան է եւ վաղուան մեր քաղաքական, մշակութային ու հոգեւոր ղեկավարութիւնը:

Ազգային իրականութեան մէջ երիտասարդ ըլլալ յեղափոխական ըլլալ, ազատական ըլլալ, նորարար ըլլալ չի նշանակեր հինը ոչնչացնել, արմատախիլ ընել կամ անտեսել, անոր տեղ որդեգրելով Ամերիկեանը, ֆրանսականը կամ ուրիշ «ական» մը, այդ պիտի նշանակէր մենք զմեզ ականահարել: Վերանորոգելու համար մեր կեանքը, մշակոյթը կամ գաղափարախօսութիւնը, նախ պէտք է ծանօթանալ անոնց եւ իւրացնել զանոնք, եւ այդ արմատին վրայ դարբերով աճած բունին վրայ աւելցնել մեր նոր ճիւղը, նոր երանգները, նոր ձայնը:

Կրօնքը մարդկային ընկերութեան տասնեակ հազարաւոր տարիներու կեանքի փորձառութեանց, զարգացող եւ աճող խորհողութեան շտեմարանն է:

Կրօնքը եղած է եւ կը շարունակէ մնալ մարդկային կեանքի յարաբերութիւնները հովանաւորող եւ ընկերային բարոյական արժեքափէրը հաստատող գաղափարական ոլորտը:

Եւ այսօր իսկ՝ մարդկային մեր կեանքը առաջնորդող եւ համաշխարհային յարաբերութիւններուն հիմքը կազմող գաղափարախօսութիւններուն՝ ինչպէս քաղաքականութեան, ժողովրդավարութեան, արդարութեան, հաւասարութեան, մարդկային իրաւունքի, եւայլն... բոլորին ալ մայրը կը հանդիսանայ կրօնքը:

Քրիստոնէական եկեղեցին, որուն հետ նաեւ Հայաստանեայց եկեղեցին կարելի է նմանեցնել կրօնական կեանքէն ներս երիտասարդական յեղափոխութեան, անիկա կը ներկայացնէ վերանորոգումը կրօնական գաղափարախօսութեան: Շատ մը աստուածաբանական եւ բարոյական սկզբունքներու հետ. որոնց հոս անդրադառնալը քիչ մը դժուար պիտի ըլլար, քրիստոնէական եկեղեցին մարդկութեան բերաւ այն ճշմարտութիւնը, թէ գաղափարախօսութիւնները չեն կրնար քարացած եւ անշարժ վիճակի մը մէջ մնալ վերանորոգումը կենսական է գոյութեան ընթացքին համար, եւ եկեղեցին հաւատարիմ այս ճշմարտութեան, աննշմարելիօրէն եւ սակայն յարատեւօրէն վերանորոգման ընթացքի մը մէջ է:

Սեր ազգային ծիրէն ներս, կրօնական առումով «Հայ» եկեղեցին ալ կը նմանի «Հայ» երիտասարդին. որպէս զի եկեղեցին ըլլայ Հայ, անհրաժեշտաբար անցաւ ծանօթացումի եւ իւրացումի հոլովոյթէն: Ս. Թադէոս

եւ Բարթողիմէոս Առաքեալներու քարոզութենէն մինչեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ մինչեւ Ս. Սահակ եւ Մեսրոպ Մաշտոց փոխադարձաբար իրարու ծանօթացման եւ իրարու հետ նոյնացան ժողովուրդն ու եկեղեցին: Այսօր հայ ժողովուրդի անխզելի եւ անկողոպտելի մէկ հարստութիւնն է հայ եկեղեցին:

Հայ եկեղեցւոյ մէջ ամբարուած եւ դարերուն համար պահպանուած են ոչ միայն երկու հազարամեայ հայ քրիստոնեական աստուածաբանական, իմաստասիրական, գրական, ճարտարապետական, երաժշտական, ընկերաբանական հասկացողութիւններն ու ստեղծագործութիւնը, այլեւ հայ ժողովուրդի չորս հազարամեայ եւ աւելի մշակութային ժառանգութեան արմատները: Հայ գրականութիւնը զարգացած էր նախամեսրոպեան բազում դարերու բանաւոր գրականութեանը մէջ, հայ մարդիկ կ'երգէին նաեւ քրիստոնեութենէն ալ առաջ եւ հայ ժողովուրդը ունէր ընկերային իր ականոյթներն ու սովորութիւնները նախաքրիստոնեական հնագոյն դարերէն սկսեալ, այս բոլորը արտացոլացուած են եւ պահպանուած հայ եկեղեցւոյ շարականներուն, բանաստեղծութիւններուն եւ գրականութեան մէջ: Իսկապէս ճանչնալու համար հայ ժողովուրդը անհրաժեշտ է ճանչնալ Հայաստանեայց եկեղեցին:

Եկեղեցին սակայն սոսկ ընկերային հաստատութիւն մը չէ, ան է նաեւ ու մանաւանդ հոգեւոր հաստատութիւն մը:

Եւ այսօր մարդկութիւնը եւ մանաւանդ երիտասարդութիւնը իր կեանքովն իսկ փորձարկելէ ետք Սովետական բոլշեւիզմի եւ Ամերիկեան գաբիթալիզմի եւ ուրիշ «իզմերու» դրախտները՝ յուսախաբուած ու աւելի քան երբեք լքուած իր մենութեանը մէջ կարիքը ունի հոգեկան զօրութեան եւ հոգեւոր մատակարարումի:

Արդէն իսկ արդի երիտասարդութեան մօտ նշմարելի են դեպի հոգեկան եւ բարոյական արժեքներու վերադարձի պահանջները:

Հայ եկեղեցւոյ առաքելութիւնն է ծառայել մեր ժողովուրդի եւ մեր երիտասարդութեան կարիքներուն: Անհրաժեշտ է մօտենալ եկեղեցւոյ, սրտաբացօրէն երկխօսութիւն մը ունենալ անոր հետ, արտայայտել մեր մտածումներն ու մտահոգութիւնները, որպէս զի եկեղեցւոյ ծառայութիւնը ըլլայ աւելի նպատակասլաց եւ օգտակար:

Մենք կը հաւատանք մեր երիտասարդութեան եւ կը մաղթենք, որ անոնք աւելի մեծ դերակատարութիւն ունենան մեր ազգային կեանքի բոլոր ասպարեզներու մէջ:

Յաջողութիւն:

ԽԱԺԱԿ ԱՐԶ. ՅԱԿՈԲԵԱՆ

Հայաստան, երկիր համա՛յն հայություն

Հայաստան: Ամեն անգամ որ լսեմ այդ անունը, մեջս կ'արթննայ անբացատրելի զգացում մը: Դարերու ընթացքին, այդ հողին վրայ է որ մեր ժողովուրդը ապրած է եւ կերտած իր պատմութիւնը: Թէեւ երբեք չէի տեսած, սակայն միշտ կարողացած էի երեւակայել իր գեղեցկութիւնը կարդացած գիրքերէս կամ լսած պատմութիւններէս: Մեծագոյն փափաքս էր օր մը այցելել հայրենիք, անոր օդը շնչել եւ հողը դպնալ: Վերջապէս, այս ամառ բախտաւորութիւնը ունեցայ առաջին անգամ ըլլալով մեկնիլ Հայաստան:

Մոնթրէալէն ինծի միացան 5 ընկեր-ընկերուհիներ: Կային ոմանք որոնք մի քանի տարիներ առաջ բախտաւորութիւն ունեցած էին այցելելու հայրենի աշխարհ: Ուրիշներու համար ալ, ինծի նման, անդրանիկ այցելութիւնն էր:

Հազիւ օդանաւի աստիճաններէն իջայ եւ ոտքս դրի հայրենի հողիս վրայ, իւրաքանչիւր քայլ որ կ'առնէի մտքիս մէջ նոր մտածումներ կը ծագէին: Առաջին տեսարանը որ տեսայ օդակայանէն հազիւ դուրս ելած, Արարատ լեռն էր, իր երկու գագաթներով: Չէի երեւակայած թէ ինչքան գեղեցիկ եւ մեծ էր ան: Չեմ կարծեր որ ոչ մէկ նկար կրցած էր փոխանցել անոր իսկական մեծութիւնը եւ գեղեցկութիւնը: Արարատը որ իմ ինքնութեանս խորհրդանիշն էր, ահաւասիկ աչքերուս առջեւ կը գտնուէր: Քիչ մը հեռու, քաղաքին մէջ հայկականութիւն կը բուրէր՝ գետեղուած արձաններով, թանգարաններով եւ մանաւանդ գեղեցիկ լեռնոտ տեսարաններով:

Մեր այցելութեան առաջին տասը օրը մասնակցեցանք Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Երիտասարդական եւ Ուսանողական 8-րդ բանակումին: Բանակումը ընդհանրապէս տեղի կ'ունենայ ամէն երկու տարին անգամ մը Հայաստանի մէջ: Այս տարի, մեր բանակավայրը կը գտնուէր Սիւնիքի շրջանի, Ղափան քաղաքի կողքին գտնուող Կարմրաքար գիւղին մէջ: Ղափանի բանակումը նուիրուած էր Արցախի ազատագրական շարժման 15 ամեակին եւ ուներ իբր նշանաբան «Շարունակենք կերտուած յաղթանակների ուղին»:

Բանակումին կը մասնակցէին մօտ 13 երկիրներէ հաւաքւած, աւելի քան 350 հայ երիտասարդականներ եւ ուսանողականներ: Կային ընկերներ եւ ընկերուհիներ Հայաստանի տարբեր շրջաններէն,



Արցախէն, Զաախքէն, Արեւելեան եւ Արեւմտեան Ամերիկայէն, Սուրիայէն, Լիբանանէն, Քուէթէն, Յունաստանէն, Արժանթինէն, Երուսաղէմէն, Պարսկաստանէն եւ վերջապէս Մոսկուայէն: Բանակումի բացման արարողութիւնը տեղի ունեցաւ Եռաբլուրի մէջ, ուր առիթ ունեցանք այցելելու մեր զոհուած ազատամարտիկներու շիրիմները:

Բանակումին նպատակն էր համախմբել հայ երիտասարդ երիտասարդուհիները, անոնց մտքերը աշխուժացնել, զանոնք դաստիարակել, ինչպէս նաեւ Սփիւք-Հայրենիք կապեր ստեղծել: Մեզի համար պատրաստուած էր յատուկ օրակարգ: Նախ իւրաքանչիւր երկրի ներկայացուցիչ տեղեկութիւններ տուաւ իր շրջանի գործունէութեան եւ դժուարութիւններու մասին: Աւելի՛ն, տասը օրերու ընթացքին լսեցինք դասախօսութիւններ եւ զրոյցներ տարբեր նիւթերու շուրջ, օրինակ՝ Համաշխարհային ընկերվարական շարժում, Թուրքիոյ քաղաքական եւ տնտեսական իրավիճակը կամ Հ.Յ.Դ. երիտասարդացին դերը Հայ Դատի հետապնդման մէջ: Դասախօսները հրաւիրուած էին մի քանի երկիրներէ եւ հիւրաբար մասնակցեցան մեր բանակումին: Առիթը ունեցանք անոնց հետ մտերմանալ եւ զրոյցել:

Բանակումի ընթացքին, մասնակցեցանք նաեւ արշաւներու որոնք թէեւ քիչ մը երկար էին եւ յոգնեցուցիչ, սակայն շատ տպաւորիչ դարձան: Այցելեցինք Գարեգին Նժդեհի յիշատակին նոր կառուցուած յուշարձանը Ղափան քաղաքին մէջ, Ղափանի զոհերու գերեզմանը եւ Ցեղասպանութեան զոհերու յուշարձանը: Այցելեցինք նաեւ Արամ Մանուկեանի ծննդավայրը եւ վարժարանը ու պտտեցանք Դաւիթ Բէկ գիւղը:

Բանակումը միայն դասախօսութիւններով եւ արշաւներով չվերջացաւ անշուշտ: Զօրանոցի զինուորները դաստիարակեցին մեզ գիտելիքներով եւ մարզանքներով: Իւրաքանչիւր բանակող դարձած էր մէկ մէկ զինուոր որ կարծես կը պատրաստուէր ծառայելու իր հայրենիքին համար: Երեկոները կազմակերպած էին ընկերային խրախճանքներ եւ խարոյկահանդէսներ ներկայութեամբ Երեւանէն հրաւիրուած երգիչ-երգչուհիներու:

Բանակումի վերջին օրը մեկնեցանք Ղարաբաղ: Պտտեցանք Շուշի եւ Ստեփանակերտ քաղաքները: Ղարաբաղի մէջ զգացումներս

բոլորովին տարբեր էին: Ամէն մէկ քաջ որ կ'առնէի մէկ հերոս ֆետայի մը կամ ճակատամարտ կը յիշեցնէր: Անոնք իրենց արիւնը թափած էին որ ես այդ օրը կարենայի քալել ճիշդ այդ հողին վրայ:

Բանակումին փակումը կատարուեցաւ Ստեփանակերտի հրապարակը, ուր կազմակերպուած էր փառատօն մը, բաց՝ ամբողջ ժողովուրդին: Երեկոն խանդավառեցին երգիչներ ինչպէս նաեւ բանակումի ընկերային յանձնախումբը պատրաստած էր կենդանի պատկեր մը: Ժողովուրդը առիթը ունեցաւ տեսնել աշխարհի չորս կողմէն եկած հայ երիտասարդութիւնը, որ հաւաքուած էր մէկ տեղ եւ կը գործէր միասին: Հոն փոխանցուեցաւ բանակումին պատգամը, որովհետեւ 15 տարի առաջ, հոնկէ թափ առաւ Արցախի ազատագրական շարժումը:

Բանակումի ընթացքին ծանօթացանք տարբեր երկիրներէ եկած երիտասարդներու, ստեղծեցինք սերտ կապեր եւ աւարտին իրարմէ բաժնուեցանք այն խոստումով, որ կրկին պիտի տեսնենք զիրար մի քանի տարիէն, անգամ մը եւս հայրենի հողին վրայ:

Յաջորդող երկու շաբթուան ընթացքին, այցելեցինք Երեւանէն ներս թէ դուրս գտնուող բաւական գեղեցիկ վայրեր: Թէեւ տեղ չկայ հոս բոլորը նշելու եւ իւրաքանչիւրին մասին զգացումներս յայտնելու, սակայն պիտի նշեմ մի քանի հատը: Երեւանէն ոչ շատ հեռու այցելեցինք նշանաւոր Խոր Վիրապը: Անշուշտ իջանք այն սուրբ փոսը, ուր Գրիգոր Լուսաւորիչ անցուց տասներեք երկար տարիներ: Մօտէն տեսանք Սարդարապատի յուշահամալիրը, Ծիծեռնակաբերդը, Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը եւ Էջմիածնի Սուրբ Տաճարը: Բարձրացանք Գեղարդ, Գառնի եւ ուրիշ բազմաթիւ վայրեր: Իւրաքանչիւրը տարբեր էր եւ ունէր իր յատուկ գեղեցկութիւնը: Վերջապէս այցելեցինք զոհուած հերոսներու շիրիմները:

Անձամբ ներշնչուած վերադարձայ Մոնթրէալ: Հիմա շատ աւելի խորունկ սէր եւ յարգանք ունիմ հայրենիքիս հանդէպ: Կտոր մը հող կրնայ թուիլ օտարներու համար, սակայն ինծի համար շատ աւելին է: Հայաստանը բարեկաւուած է եւ ապագային ալ աւելի պիտի բարեկաւուի: Հայ երիտասարդին կը մնայ որդեգրել ծրագիրներ իր կարելիին չափ զարգացնելու հայրենիքը:

Կը կարծեմ որ իւրաքանչիւրս սերտօրէն կապուեցանք մեր հայրենիքին, ինչպէս զառակ մը կը կապուի իր մօր եւ այդ կապը պիտի մնայ անխախտ: Հիմա որ վերադարձած ենք մեր տուները, մեծ աշխատանք կը սպասէ բոլորիս, մասնաւոր՝ Դաշնակցական երիտասարդին, որ իր կարելիին պիտի ընէ գործելու որպէսզի Հայաստանը մնայ մերը: Գարեգին Նժդեհի խօսք մը ունի որ կ'ըսէ «Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովուրդի ապագան, նայիր նրա երիտասարդութեան»: Վստահ եմ որ բոլորս ուշ կամ կանուխ անպայման պիտի վերադառնանք հայրենիք:


Խօսքս փակելէ առաջ, կ'ուզեմ իմ եւ իմ ընկերներուս անունով շնորհակալութիւն յայտնել Հ.Յ.Դ. Երիտասարդաց Միութեան որ մեզի առիթը ընծայեց մասնակցելու բանակումին եւ ապրելու անմոռանալի օրեր հայրենի հողին վրայ: Վերջապէս կը թելադրեմ որ իւրաքանչիւր հայ եւ հայ երիտասարդ անպայման այցելէ հայրենիք եւ իր աչքերով տեսնէ անոր գեղեցկութիւնը:

ՄԱՐԻԱ ՔԷՕՍԷԵԱՆ

Մոնթրէալի «Լետոն Շանթ» մասնաճիւղ



Մեր Ապագան



Օգոստոս 9, 2003-ին,
Հ.Յ.Դ Համահայկական բանակու-
մի պատասխանատուները պատ-
րաստած էին արշաւ մը դէպի
Ղափան, ուր կը գտնուի Արամ
Մանուկեան վարժարանը:

Հոն ծնած է Հայաստանի
Հանրապետութեան հիմնադիր-
ներէն՝ Արամ Մանուկեան (Սերգէյ
Յովհաննէսեան):

Բոլորս Հայաստանի գեղե-
ցիկ լեռներուն ընդմէջէն, մեկնե-
ցանք Ղափանի Դաւիթ Բէկ
գիւղը: Գիւղի մուտքին, մայրիկ
մը ու իր երեք թոռնիկները կանգ-
նած էին: Հպարտացած ու
զմայլած մեզ կը դիտէին,
որովհետեւ իրենց շրջանը երբեք
երեք հարիւր երիտասարդներ
միասնաբար ոտք չէին կոխած՝
իրենց այցելելու:

Հարազատի պէս մեզի
միացան ու սկսան տեղեկութիւններ
տալ Արամ Մանուկեան դպրոցին
մասին: Նախ ամչնալով, իսկ
պահ մը ետք համարձակ՝
անոնցմէ՝ Շողիկն ու իր քոյրերը
սկսան արտասանել հայ ազգի ու
ընտանիքի մասին քերթումներ:
Բոլորս հիացած մտիկ ըրինք ու
ապա իրենց հետ մտերմացանք:
Շատ զգալուն վայրկեաններ
ապրեցանք հոն, տեսնելով մեր
հայ դաշնակցական մարտիկներու
զաւակները, երբ փոքր տարիքէն
իսկ, բանաստեղծութեամբ կը
ներկայացնեն իրենց պատրաս-
տակամութիւնը, պատերազմի
դաշտ նետուելու, իրենց հօր
տիպարին հետեւելու:

Ապա ուղղուեցանք դէպի
վարժարան, որ ունի իրմէ անկախ
մանկապարտէզ մը, ուր կը
յաճախեն յիսուն աշակերտներ:
Դպրոցը ունի նաեւ նախակրթա-
րան եւ երկրորդական կարգեր,
ուր կը յաճախեն երկու հարիւր
աշակերտներ:

Մեր այս այցելութիւնը
ամառ ատեն ըլլալով, դժբախ-
տաբար կարելիութիւնը չունեցանք
ուսանողները տեսնել ու հարցու-
փորձել զիրենք: Սակայն դպրոց
մտանք, եւ տեսանք հետեւեալ-
ները:

- Երեք յարկանի շէնք մը,
որ կը գտնուի գիւղին վերեւ:
Դասարանները ունին բարձր
տանիք ու լայն պատեր, իսկ
դպրոցը ունի ընդարձակ բակ
աշակերտներու զբօսանքներու
համար: Իւրաքանչիւր դասարան
կ'ընդգրկէ իր դասանիւթը
Օրինակի համար, հայոց պատ-
մութեան դասարանի պատերէ
կախուած էին՝ «Հայրենիք
պաշտպանութիւնը Սուրբ գործ է
վերնագրով տախտակը, որ կը
ներկայացնէ հայկական նորագոյն
պատմութեան ամենակարեւոր
դէպքերը՝ ֆիտայական շարժում
հայկական բանակ, Հայոց
Պետականութեան հիմնադիրները
Արցախեան ազատամարտիկներ
եւայլն: Նոյն դասարանին մէջ կը
գտնուէին նաեւ զէնքերու նկարներ
եւ տեղեկութիւններ:



Գեղարքաններ
Հասարակական շինվածք



«Հայրենիքի»
Պաշտպանության
Առաջին Գործ Է



Աշխարհի յոթ կողմից
նորաստեղծականներ՝
«Արամ» Մանկական
գարձարանի մուտքին

Այս գծով աշակերտները կը դաստիարակուին թէ՛ հայերենով եւ թէ՛ ռուսերենով: Իսկ ուսուցչին գրասեղանին վրայ կար «8-էն 10-րդ դասարանների շաբաթական պլանը», որ կը ներկայացնէ աշակերտներուն սորված ու գործածած ծրագիրները: Ուրեմն, աշակերտները պարտադիր կը հետեւին կրակային պատրաստութեան, մարտավարութեան հիմունքները սորվելու, ինչպէս նաեւ առաջին բուժօգնութեան գիտելիքները, որեւէ պատերազմական տագնապի ընթացքին:

Այլ տեղ գրուած էր հետեւեալը. «Իւրաքանչիւր քաղաքացի պարտադիր է օրէնքով սահմանուած կարգով մասնակցիլ Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան»:

Գալով ֆիզիքի դասարանին, պատերէն մէկուն վրայ կախուած էր Տարրերու Տախտակը, իսկ տանիքին վրայ գծուած էին մոլորակներն ու արեւային համակարգը, ինչպէս նաեւ ելեկտրականութեան տախտակներ:

Աւելի ուշ նստանք դպրոցին բակը, որ շրջապատուած էր գեղեցիկ կանաչութեամբ:


Արամ Մանուկեան դպրոցը հաստատ շէնք մըն է, պատրաստ մեր հայորդիներուն դասաւանդելու այն ուսումը, զոր մեր հայրենիքը կը ձգտի տալ իր քաղաքացիներուն:

Եզրակացութիւնը ձեզի կը ձգեմ, հիմա երբ գիտէք թէ ինչպիսի տեղ մը մեր հայ զաւակները կ'ուսանին, եւ իրենց բոլոր սորվածները կը գործադրեն իրենց ամէնօրեայ կեանքին մէջ:

*«Մենք ցիր ու ցան աշխարհում,
Հեռաւոր երկիրներում,
Պանդուխտ ու թափառական,
Կարօտ սրտով յափտեան»:*


*Մենք երգենք միշտ Հայերէն,
Աղօթենք միշտ Հայերէն,
Զմոռանանք մեր Մայր Լեզուն,
Որ մնանք միշտ
Հայ՛, Հայ՛, Հայ՛»:*

ԴԱԼԱՐ ՄԻՐԶԱՅԵԱՆ
«Լեւոն Ծանթ», Մոնթրէալ






«Արամ Բաղդասարյան»
Վարժարանի
դասարաններում մէջ



Յաջողութիւն «ԱՐԾԻԻ» Պաշտօնաթերթին

**Մոնթեալի Հ.Յ.Դ.
«Միհրան Փափազեան» Կոմիտէ**



Յաջողութիւն «ԱՐԾԻԻ» Պաշտօնաթերթին՝

Լաւալի
Հ.Յ.Դ. «Սարգիս Զէյթեան» կոմիտէ


We are all one

This year, I finally had the opportunity to see my homeland with my own eyes. Being in Armenia was a very enlightening and unforgettable experience for me as well as for my five friends who joined me on this amazing journey home. As the plane descended, tears filled my eyes when people on the airplane shouted out "Look everyone, we're home!" As we made our way out of the crowded Zvartnots airport, which was full of excited tourists, the sun began to rise slowly and I looked around me in awe and disbelief. On the way to our hotel, the statue of Mayr Hayasdan stood before us audaciously and fearlessly. I was really in Armenia! A dream come true!

A day later, several buses took the 2003 Youth Jamboree participants from Yerevan to Garmrakar on a twelve-hour ride. It was an extremely hot day. The ride was very long and tiring. The buses had no air-conditioning and they kept getting flat tires or breaking down, but we were having so much fun that I don't think it bothered anyone at all. Those conditions gave us the opportunity to get to know each other, mingle, and make new friends. Our first stop was at Yeraplour where many Armenian heroes are buried and where the opening ceremony was held.

Approximately 350 young Armenians from 15 different countries around the world participated. An overwhelming amount of journalists and television cameras were present, which made me realize how much Armenia places importance on its youth.

From day one, we quickly became conscious of our different lifestyles and mentalities as Diaspora Armenians, which initially caused problems for many of us. Some people, including myself, experienced a huge culture shock. For me, this culture shock was because of the fact that I've been living outside of my homeland for so long and I have unfortunately gotten used to the materialistic and comfortable lifestyle that Canada has to offer. Moreover, much of my values and my mentality have been greatly influenced by Canadian norms and I mistakenly began judging things and people from a Canadian's perspective. It was then that I became aware of the "rose-coloured glasses" with which our secure and cozy North American lifestyle blinds us. However, the rest of the world is not such a rosy place and not everyone is as fortunate as we are. Even though I thought I knew that before going to Armenia, I realized that you don't really know something until you experience it. However,



none of that mattered after a few days because I finally removed the "rose-coloured glasses" and so did everyone else who viewed things from that perspective. The most important thing is that we are all Armenian despite the different countries we live in and the different lifestyles we have. The very land we were standing on was the reason we were there, and that's all that should matter. Therefore, a bond between my new found friends and I was quickly established and significantly strengthened as the days went by. Slowly, the clusters of people who "stuck together" because of their similar geographical locations began to dissipate and we all became one.

"Ho ho, hoheeta, hee hee, hoheeta, ta ta, hoheeta, heeeeyyy" was one of the popular chants often heard during the Jamboree. Everyone expressed their enthusiasm through similar chants and by singing patriotic and revolutionary songs all throughout the Jamboree. We sang and yelled so loud that by the fifth day most of us had lost our voices; but we kept yelling and singing, because the passion within us was too great to keep us quiet. We were given inspirational speeches and educational lectures about a variety of topics which complemented our prior knowledge about our homeland, politics, and

our culture. We went on several long, tiring, but very fun hiking trips after which the guys and the girls fought over who was going to take a bath first. We complained about the food. We often snuck slices of bread into our rooms to secretly eat Nuttela sandwiches. We also participated in soccer games, danced around the bonfire, and took turns to guard the flags and the camp site in the evenings.

This Youth Jamboree was an extremely enriching and enlightening life experience for me. Basically, we lived as one and looked after each other as a united Armenian front for ten unforgettable days. I never realized how many new friends can be made and how much one's life can change in just ten days. I intend on keeping in touch with each and every one of my new brothers and sisters from Syria, Lebanon, Iran, Israel, Argentina, the United-States, Armenia and Karabagh. We all helped each other understand what it is to be Armenian. We all became one.

LILIT BALIKIAN

"Levon Shant", Montreal

Մեր ընտանիքի անդամները.




«Մեր յարգելի բարեկամներ,

ես եւ մեր ընտանիքը ցանկանում ենք իմանալ թէ դուք ո՞վ էք, տեսնել ձեր ընտանիքի լուսանկարները: Իմ հեռաւոր բարեկամներ, եթէ երբեւիցէ ցանկանաք մեզ հիւր գալ մենք սրտանց կ'ընդունենք ձեզ եւ այնչափ ուրախ կը լինենք ձեր այցի համար: Իմ թանկագին բարեկամներ, ես նորից ու նորից իմ շնորհակալութիւնն եմ յայտնում եւ այնչափ երախտապարտ եմ ձեզ...»:

ԹԱԹԹՈՒ ԱՀԱՐՈՆԻ ԲԵԳՆԱՐԵԱՆ

Տաւուշի Բաղանիս գիւղ




«...Կը ցանկանայի դէմ դիմադրող հանդիպէինք եւ մօտիկից իրար ճանչնայինք, բայց սրան երեւում էր հնարատրութիւն չկայ, բայց եւ միշտ կը յիշեմ եւ կը սիրեմ ձեզ ի սիրելի բարերար...»:

ՍՈՆԱ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Կապան


Երկար տեսնէ ի վեր, Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ.ը կը մասնակցի ՀՕՄԻ որբախնամ ծրագիրներուն, որու միջոցաւ որդեգրած է ինը զոհուած ազատամարտիկներու երեխաներ, որոնք մեր կրտսեր քոյր-եղբայրներն են...

Ահա նամակներ իրենցմէ:



«...Աիշտ կը լիշեմ, որ հեղատը մի քաղաքում ունեն անձանց, բայց շատ հարազատ ու սիրելի բարեկամ: Ես գիտեմ, որ դուք նույնպես ինձ չէք մոռանալ եւ հոգով միշտ կը լինեք ինձ հետ...»:

ԱՐՄԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ
Կապան



«...Եւ միտելի հովանատը,

Ես Արեն Կարապետեան սովորում եմ 9-րդ դասարանում եւ իմ խորին շնորհակալությունս եմ յայտնում ձեզ իմ հանդէպ ցուցաբերած գթասրբությունեան եւ մարդասիրական վերաբերումին համար...»:

ԱՐԵՆ ԱՆՖՐԵԴԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Կապան



«Ես՝ Նելլի Սուրենի Գրիգորեան, սովորում եմ Կապանի Եղիշէ Զարեմցի անուան 18-րդ դպրոցի 8-րդ դասարանում: Սիրելի իմ բարեկամ, ես իմացայ, որ դուք Դաշնակցական էք՝ եւ ընդօրինակելով Ձեզ, ես, նույնպէս դարձայ «Դաշնակ», եւ արդէն 7 ամիս է ընդգրկուել եմ Դաշնակցութեան շարքերը: Մասնակցում եմք ժողովներին, կազմակերպում եմք հետաքրքիր միջոցառումներ եւ այլ ուրիշ հետաքրքիր բաներ:

Սիրելի բարեկամ, ես այնչափ շնորհակալ եմ Ձեզանից, որ դուք կարողանում եք օգնել ինձ»:

ՆԵԼԼԻ ՍՈՒՐԵՆԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ
Կապան



«Մենք ապրում ենք մօրս ծնողների հետ, որոնք ծեր են եւ թոշակառու: Մայրիկս, ինչպէս գիտէք, աշխատում է մանկապարտէզում: Ես Ձեզ ուղարկում եմ իմ նկարը, որը կախուած է մեր դպրոցում, որպէս լաւ սովորող: Ես ցանկանում եմ, որ դուք նույնպէս պատասխանէք իմ նամակին նկարներով: Սեպտեմբեր 2-ին լրանում է հայրիկիս մահուան 10-րդ տարին: Ես ցանկանում եմ, եթէ հնարաւոր է, որ դուք նույնպէս ներկայ լինէք յայդ օրը»:

ԱՃՈՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ
Երեւան

ISRON 5

ԼԻԶՊՈՆ 5



«Սիրելի պապա եւ մամա, ես երկու երեք շաբաթ տունէն պիտի բացակայիմ. բայց շաբաթը անգամ մը կրնայ ըլլալ հանդիպիմ: Երբեք չի մտահոգւիք, ես հոս եմ բայց տունէն քիչ մը պիտի բացակայիմ. իսկ գործին համար ես վարպետին հետ խօսած եմ. երբեք մտահոգւելու պէտք չկայ եւ ասդին անդին հարցնելու. ասոնք կ'ըսես կոր, որովհետեւ բնաւորութիւննիդ գիտեմ. միտքերնէդ երբեք բան մը չանցնէք եւ Այնճար մնացէ՛ք. մամա, չըլլա՛յ որ Պէյրուք իջնաս. կարծեցէ՛ք որ բանակումի գացած եմ: Նորէն կը կրկնես երբե՛ք չմտահոգուիք:

Սիմոն»

Ահա վերջին նամակը հայ քաջին: Վերջին գրածը ազգի վեմ կորիւնին: Դրսեւորումը հայոց մարտիկին անվախութեան եւ առասպելական քաջութեան: Ուրիշներու համար ոճրագործ եւ մարդասպան ահաբեկիչ, բայց ճշմարտութեան դիմաց, արդարութեան բազուկ: Սիմոն: Մարդկութեան պատմութեան մէջ շատ են օրինակները գերմարդկային քաջութեան եւ ահա անոր գեցիթը: Սիմոն, Վաչէ, Սագօ, Արա, Սեդրակ. Լիզպոն 5-ի աստղերը: Անոնց տիպարը յարատեւ կը մնայ հայ յանձնառու երիտասարդին մտքին մէջ: Իրենց ըրածը «ո՛չ խենթութիւն է, ո՛չ ալ անձնասպանութիւն, այլ բարձրագոյն-զոհողութիւնը ազատութեան խորանին վրայ»: Անսահման է անոնց հայրենասիրութիւնը եւ անսպառ է պահանջատիրութեան ոգին:

Իսկ, այս նամակը ցոյց կու տայ
հայ ազատամարտիկի համե-
տությունն ու մարդկային զգա-
ցումները: Մտահոգ էր իր
ընտանիքին համար: Չէր ուզեր
որ ծնողքը տառապի իր բացա-
կայության պատճառով, բայց
նույն ատեն, պարտաճանաչ ու
գիտակից, գիտէր թէ իր
ծնողքին դիմաց կը տառապի
նաեւ իր ազգը, մատնուած մո-
ռացումի եւ ենթակայ երկարամ-
եայ ճնշումի, պարտադրուած իր
վրայ համայն աշխարհի գիտա-
կից կուրության եւ անտե-
սումին պատճառաւ:

Մեր ազգը անարգուած
էր, մոռացումի դատապարտը-
ւած պատմության եւ քաղաքա-
կանության դաժան բնոյթին
պատճառով: «Հայն է եղած
միշտ անտեսուած»: Լիզպոնի
գործողութիւնը ահաբեկչութիւն
չէր Թուրքիոյ դէմ, այլ դրսեւո-
րումը հայ երիտասարդին ժա-
ռանգած այն հազարամեայ
ազգային գիծին, որ իրեն կը
պարտադրէ անձէն եւ վայելքէն
գերադասել ազատության եւ
արդարութեան սէրը ու դէմ
երթայ մոռացումին...

Այսօր, քսան տարիներ
անցած է այդ պանծալի օրէն
երբ վճռականութեամբ ազգին
կորիւնները ոտքի ելան, երբ
աշխարհին պարտադրեցին նոր
իրականութիւն. իրականութիւն
մը, ուր հայը իր անցեալին
ստրուկը չէ, այլ պայքարող մը:
Հայ երիտասարդը իրենցմէ սոր-
վեցաւ ամէն գնով պահանջել իր
իրաւունքները, արդարութիւնն ու
ազատութիւնը:

Այն օրէն ի վեր, թուրքը
ալ հանգիստ չի մնար եւ գիտե-
թէ օր մը օրանց իր վրայ պիտի
պայթի այդ արդարութիւնը, որ
պիտի խորտակէ իր ոճրագործի
ուրացումը եւ իր հալու արեամբ
հիմնուած պետութիւնը:

Կեցցէ՛ Հայոց Մարտիկը,
Կեցցէ՛ Լիզպոն գոհուած տղոց
փառապանծ յիշատակը,


Եւ գիտցէ՛ք տղաք, որ ոչ
մէկ ճիգ կը խնայենք ձեր սկսած
Սուրբ Գործը աւարտելու:

JACK - NETTOYEUR KARNIE

Cueillette & Livraison
Pick-up & Delivery
Réparations Altérations Repairs

Hagop Karabajak (Karayan)
(514) 886-2892
(514) 334-9878

ՎԻՉԵՆ Զաքարեան՝ «Ես մի զարկն եմ քո կողմի»



Լեոնային Ղարաբաղի ազատագրման պայքարը եղաւ մեր պատմութեան վերջին հանգրուանը, ուր նահատակուեցան բազմաթիւ ազատամարտիկներ, իրենց ետին ձգելով իրենց ընտանիքը, հարազատներն ու կեանքի վայելքները: Նահատակուող մեր ընկերներուն մաս կը կազմեն մեծ թիւով երիտասարդներ, որոնցմէ մէկն էր Վիչեն Զաքարեան: Պատերազմի դաշտին վրայ, ֆիտային յոգնութիւն չի ճանչնար: Յոգնութիւն կը նշանակէ պարտութիւն պատերազմի ընթացքին: Իր կեանքի ընթացքին, Վիչեն Զաքարեան երբեք չէ ճանչցած յոգնութիւն ըսուածը: Նուիրուած էր գաղութին, ազգին, մշակութիւն եւ Ազատ Անկախ ու Միացեալ Հայաստան գաղափարին:

Ան փոքր տարիքէն իսկ սկսած է իր միութենական կեանքը: Կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.-ի Սկստուական կազմին, ապա մարզական բաժնին: Աւելի ուշ ան կը միանայ Հ.Յ.Դ. Լիբանանի Երիտասարդական Միութեան շարքերուն, ուր կը վարէ բազմաթիւ պաշտօններ: Այս միութենական գործերուն կողքին ան նաեւ իր մասնակցութիւնը կը բերէ Համազգայինի պարաօլիմպիկներին: Սակայն, ան չբաւարարուեցաւ այս գործերով: Արցախի ազատագրման պայքարի ընթացքին, Վիչեն վազեց դէպի հայրենիք, իր մասնակցութիւնը բերելու հայրենի հողի պաշտպանութեան:

Եկաւ այդ օրը, հասաւ այդ պահը, ուր անգութ թշնամիի սուր գնդակը գտաւ մեր ընկերոջ, Ծուշիի ազատագրման ճամբուն վրայ: Ան հետեւեցաւ հայրենաճակարման եւ զոհողութեան ճամբուն, ուրկէ քալեցին հայրենիքի ազատագրութեան մեծ հերոսները: Մի քանի օր ետք, Ծուշին ազատագրուած էր, շնորհիւ Վիչեն Զաքարեանի նման հերոս ազատամարտիկներու: Աւա՜ղ որ Վիչեն ներկայ չէր: Ներկայ չէր որ տեսնէ Ծուշին վերահալացած ու համբուրէ անոր հողը: Կեանքը դաժան եղաւ անոր հանդէպ:

Այսօր չկայ Վիչենը, 11 տարի անցած է իր մահուան օրէն, բայց իր յիշատակը կը շարունակուի անմար մնալ: Թանկագին ընկեր մըն էր, որ կորսնցուցինք: **Յիշատակը Վիչեն պիտի մնայ յաւիտեան:**

ԶԱԻԷՆ ՏԷՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ՎԻՉԵՆԻ ՅԻՉԱՄԱՍԿԻՆ

Խօսք՝ Ն. Նիկողոսեանի
Երաժշտ՝ Գ. Հայիթեանի

Վիգէն զրահ մեր պայքարի,
Հերոս մարտիկ հայ Արցախի:
Անսակարկ կեանքը ազգի համար,
Հայրենիքի սիրոյն նուիրաբար:

Կրկներգ. Յիշատակդ Վիգէն մնայ յաւիտեան,
Արցախեան լոյս, անշէջ անմար:
Սերունդներու վեհ մեր հայութեան,
Դառնայ սուրբ նշխար հաղորդութեան:

Հայու խոցերէն վեր բարձրացար,
Զէն ի ձեռին խոյացար հերոսաբար
Նուիրական արինովդ անմահական,
Միացար փառանգին մեր ֆիտայական:

Կրկներգ. Յիշատակդ Վիգէն մնայ յաւիտեան,
Արցախեան լոյս, անշէջ անմար:
Սերունդներու վեհ մեր հայութեան,
Դառնայ սուրբ նշխար հաղորդութեան:

27

HISTORY OF THE A.Y.F./A.R.F. Y.O.C.



The Armenian Youth Federation (Presently the A.R.F. Youth Organization of Canada) was established in 1933, giving form and unity to various unconnected youth groups in the United States.

Empowered by a decision handed down January 14, 1933 by the A.R.F. Central Committee of North America, General Karekin Nejdeh, who had arrived in the United States to organize the existing several youth societies into one strong federation of Armenian youth, immediately began to visit the Armenian communities of North America, exhorting the youth to enter the new organization. Representatives of the newly "merged" club met in July 1933, and took steps to set up a national administrative system pending the First Annual Convention, which was held June 1-3 1934, at the Hairenik building, Boston, Mass. Soon after, chapters began to spring up in various Armenian communities; in Canada the first chapter to come into existence was in St-Catharines, Ontario in 1933.


Until 1974, the A.Y.F. was one organization which included over 50 chapters in three regions: the Eastern American region, the Western American region and the Canadian region. Each was governed by its own Regional Executive, which in turn was subject to the Central Executive whose head office was in Boston. In 1974, the A.Y.F. went through an administrative restructuring, which separated the three regions. Today each has its own Central Executive, accountable only to their own Regional Congress. During the early eighties, the A.Y.F. in Canada changed its name to A.R.F. Youth Organization of Canada.

Presently the A.R.F. Y.O.C. has eight active Senior and Junior chapters in all the major Armenian Communities of the country. Its members are active Armenian young men and women, devoted to the vision of a united, free, and independent Armenia.

«Բեկոր Աշոտ»

մասնաճիւղի տասնամեակ

Աշոտ Ղուկեան: Արցախի ազատամարտի ընթացքին վիրատուրուած 11 անգամ եւ փամփուշտներն ու ռումբի կտորները իր մէջը ըլլալով հանդերձ, շարունակած է իր գոհողութիւնը առանց վայրկեան մը մտածելու իր հանգիստին ու առողջութեան մասին: Իր այս քաջութեան ու հսկայական հերոսութեան համար ան կոչուած է «Բեկոր»: Չհամոզուած որ պէտք է անմիջապէս բուժուի, ան կ'ըսէ «Այս մարտին էլ մասնակցիմ, այս մի գիւղն էլ ազատագրենք, յետոյ»: Ահաւասիկ հայ հերոսներուն կարգին գտնուողներէն մին, որուն անունը կը կրէ Լաւալի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի Երիտասարդական Միութեան մասնաճիւղը:»



Բեկոր Աշոտ մասնաճիւղը այսօր տասը տարի է գոյութիւն ունի իր յարատեւ գործունէութեամբ: Ան բնաւ չէ շեղած իր նպատակէն, այլ հաւատարիմ մնացած է եւ կը մնայ իր երդումին, ծառայելով ազգին ու հայրենիքին: Իր դաշնակցականի ոգին կը յարատեւ միշտ եւ այս մասնաճիւղը ոչ անպայման պատերազմի դաշտին վրայ, այլ իր անվերջ աշխատանքով հայ երիտասարդներու մէջ արթնցնել կը փորձէ դաշնակցական ոգին ու հայ ըլլալու հպարտութիւնը: Այս մասնաճիւղին մաս կազմող երիտասարդ-երիտասարդուհիները կը հասկնան թէ ինչ է հայ ըլլալը: Օտար ափերու վրայ ինկած ազգ մը, որ կը պահպանէ ու հզօրացնէ իր ինքնութիւնը: Հանգիստ կեանքը չփնտռող այլ պայքարող հայ երիտասարդն է որ կ'ուզէ իր ամենամեծ երազը իրականացնել, երթալ իր հայրենիքին ներկայ ու պատմական հողերուն վրայ հաստատուիլ եւ հոն ալ ապրիլ իր կեանքը: Ուրեմն, - այս միութեան մէջ գործող երիտասարդը կ'ապրի լիօրէն դաշնակցականի երազը, համոզուած՝ որ օր մը այդ երազը պիտի իրականացնէ:

ՄԱՐԻԱ ՏՈԼՄԱՃԵԱՆ

Լաւալի «Բեկոր Աշոտ» մասնաճիւղ

Հ.Ե.Ռ... 70 տարին



«Ուզում ես
ժողովուրդի
երիտասարդ

արդեն



կել, տեսնել մի
անձնակա՛նք
:»

արեգիկն Նժդեհ

Հ.Ե.Դ. / Գ.Ե.Մ. Երէկ եւ Այսօր

Հայ գաղութներու անմար ոգին, նուիրում, աշխատող, չվհատող Բոցն է ան, խենթ ուժն ու կորովը, որու համար արգելք ու անկարելիութիւն գոյութիւն չունին:

Գաղութները ներշնչող խանդավառ ու պատրաստակամ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան ընկերուհիներ ու ընկերներ, տասնամեակներու ընթացքին մաս կազմած են Հ.Ե.Դ.-ի ու իրենց գործունէութեամբ սատարած են կազմակերպութեան գոյութեան ու շարունակականութեան:

Ահաւասիկ, այս տարի, հայ գաղութները Հիսիսային Ամերիկայի տարածքին, մեծ խանդավառութեամբ կը տօնեն Հ.Ե.Դ.-ի 70 ամեակը: Անկիւնադարձային տօն մըն է, որովհետեւ այս կազմակերպութիւնը, յատկապէս սփիւքի մէջ, յաջողած է գոյատեւել ամբողջ եօթանասուն տարիներ եւ իր էութեամբ ու աշխատանքով, ամրապնդած է սփիւքի հայապահպանումը, մանաւանդ երիտասարդութեան մօտ:

1915-ի Եղեռնէն ետք, սփիւքի մէջ ծնունդ առած այս աճող կազմակերպութիւնը կը շարունակէ գործել ու պայքարիլ իր նուիրեալ երիտասարդներու ներդրումով եւ անսակարկ ջանքերով: Ականատես ու մանաւանդ գործօն եղած է սուգի, պայքարի եւ յաղթանակի օրերուն: Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը դիմաւորեց ու ապրեցաւ Հայաստանի երկրորդ անկախութեան հռչակումը եւ հաւատարիմ Նժդեհի գաղափարներուն, մասնակցեցաւ հայրենիքի օժանդակութեան:

Կարելի չէ անտեսել գաղութներէն ներս Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան իրագործումները՝ Հայ Դատի, դաստիարակչական եւ ընկերային գետնի վրայ: Աշխատելով այս մարզերէն ներս, յաջողուցած է զանազան ծրագիրներ, միշտ հիմնուելով Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան գլխաւոր հետեւեալ նպատակներուն վրայ. համախմբել հայ երիտասարդութիւնը Հ.Յ.Դաշնակցութեան շուրջ եւ տալ անոր անհրաժեշտ գաղափարական, քաղաքական եւ ազգային դաստիարակութիւնը, որուն հիմը պէտք է կազմեն Հ.Յ.Դաշնակցութեան ծրագիրը, կանոնագիրը, պատմութիւնն ու աւանդները, եւ աստիճանաբար կուսակցութեան շարքերը առաջնորդել զայն:



Պահ մը սակայն վերադառնա՞նք այս կազմակերպութեան ծնունդին: Ամերիկայի զանազան քաղաքներուն մէջ տարածուած հրեւիտասարդութիւնը համախմբելու եւ հայ ինքնութիւնն ու ազգային գաղափարները պահպանելու տեսլականով, Գարեգին Նժդեհի հիմնէ « Յեղակօն » շարժումը 1933-ին. Պոսթըրնի մէջ: Հակառակ այս շարժումին հակառակորդներուն ընդիմութեան, Նժդեհ յաջողեցաւ միացնել երիտասարդութիւնը մէկ գաղափարի տակ: Ան տաղանդաւոր ճառախօս մըն էր. նոյնիսկ օտարներ կու գային մտիկ ընելու անոն հմայիչ խօսքերը:

Յեղակօն ուխտեալներու Ա. պատգամաւորական ժողով տեղի ունեցաւ Պոսթըրնի մէջ, 16 Յունիս 1933-ին: Այս ժողովի հաւաքուած էին մօտ քառասուն երիտասարդներ, եկած Հիւսիսային Ամերիկայի ուրիշ շրջաններէ: Անդրանիկ Կեդրոնական Վարչութիւնը եւ համայն « Յեղակօն » անդամները Ա. համագումարին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի հետ կը կապուին հեռագրումը, կը խոստանան որ ցեղակօնները պիտի հետեւին Հ.Յ.Դ.-ի գծած ճամբուն: Այս ձեւով, նոր էջ մը կը բացուի հայ սփիւռքի պատմութեան մէջ: Միեւնոյն ատեն, "Armenian Weekly" շաբաթաթերթը կը դառնայ պաշտօնական օրկանը ցեղակօններուն:

1940-ին, Օիգակոյի մէջ գումարուած ութերորդ պատգամաւորական ժողովը կ'որոշէ Յեղակօն Ուխտերը անուանել Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւն: Տասնամեակներու ընթացքին, անդամներուն թիւը կ'աճէր, այլ մասնաճիւղեր կը ստեղծուէին Հիւսիսային Ամերիկայի տարածքին:

1973 - 1974 տարեշրջանին, աշխարհագրական հեռաւորութիւններու եւ հաղորդակցութեան դժուարութիւններու պատճառաւ, Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը կը բաժնուի երեք մասերու. Արեւմտեան Ամերիկա, Արեւելեան Ամերիկա եւ Գանատա, իւրաքանչիւրը իր անջատ Կեդրոնական Վարչութեամբ: 1981-ին Գանատայի շրջանի պատգամաւորական ժողովը կ'որոշէ փոխել իր կառույցը եւ դառնալ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի Երիտասարդական Միութիւնը, որ մինչեւ օրս կը գործէ: Սակայն, մինչեւ այսօր զարկ կը տրուի երեք շրջաններուն միջեւ անհրաժեշտ կապին:




Հայրենիքէ հեռու, ունինք քաղաքական, կրօնական կրթական, մշակութային եւ մարզական կառույցներ, որոնք իրենց անխոնջ աշխատանքով կը նպաստեն հայապահպանման գործին: Մենք ալ, իբրեւ Հ.Յ.Դ. Գանատային Երիտասարդական Միութեան անդամներ՝ Նժդեհի ժառանգորդներ մեր նպատակն ու առաքելութիւնն է վառ պահել այս կենարար ջանքը, դիմագրաւելով զանազան նոր ու հին մարտահրաւերներ:

ԼԱԼԷ ՄԱՆԾԻԿԵԱՆ


«Լեւոն Ծանթ» Մասնաճիւղ - Մոնթրէալ





Յաջողութիւն «Արծիւ» Պաշտօնաթերթին՝

Հաւաքի Հ.Օ.Մ.-ի «Շուշի» Մասնաճիւղ



Յաջողութիւն «Արծիւ» Պաշտօնաթերթին

Մինթրէալի Հ.Օ.Մ.-ի «Սօսէ» Մասնաճիւղին

Հ.Յ.Դ. Գ.Պ.Մ. Թորոնթո

Սիրելի ընկերներ,

Կու գանք «Արծի» հրատարակության ընթերցողներուն Թորոնթոյի Պատանեկան Միութեան Վարիչներուն կողմէ նկարագրական մը ներկայացնել կրտսեր այս խմբակի աշխատանքներուն եւ գործունէութեան մասին:

Պատանեկան միութիւնը իր կրտսերներու խումբերու միջոցաւ կը ջանայ իր ամբողջ էութեամբ ձգտիլ ու դառնալ այն հաւաքավայրը, ուր պատանիներ իրենց փոքր հասակէն կու գան սորվելու մեր հայութեան արժէքներուն մասին, ինչպէս նաեւ դառնալու ապագայ սերունդները Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան:

Այս տարի եւս, մեր վարչական կազմով ու նոր թափով եւ երթով կը շարունակենք դաստիարակել մեր մատղաշ սերունդները, այն մեծ յոյսով որ պիտի դառնան տիպար Հայեր, ազնիւ ու արի, միշտ պատրաստ Հայրենիքի եւ Հայ ազգի համար աշխատելու: Պատանի խումբերուն դաստիարակչական ու քարոզչական նիւթերով, ձեռային աշխատանքներով ու զանազան դաշտագրնացութիւններով ու հաւաքներով կը ջանանք ստեղծել միջավայր մը, ուր Հայ

պատանին պիտի աճի ու մեծնայ իր հայ պատմութեան գիտակից ու ինքնութեամբ հպարտ:

Յոյսով ենք բոլորս որ մեր երթը մեզի տանի դէպի փայլուն ապագայ մը, ուր այսօրուայ պատանիները պիտի դառնան մեր երիտասարդները, որոնք պիտի շարունակեն պահանջատէր պայքարը մեր արդար դատին ու միացեալ Հայաստանի կերտման համար:

Սիրելի պատանի ընթերցող, անդամագրուէ Գանատայի Պատանեկան Միութեան շարքերուն, եւ բարեփոխէ քու ազգիդ ներկան ու ապագան, սկսելով պատանի տարիքէդ:

**Հ.Յ.Դ. Գ.Պ.Մ.
Թորոնթոյի մասնաճիւղի
Վարիչ կազմ**

Մեր պատանիները կը գրեն

Հայ պատանիներ փոքր տարիքէն սկսեալ կ'անդամագրուին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պատանեկան Միութեան, սկիզբը թերեւ միայն խաղալու համար, սակայն խելահաս տարիք մը հասնելէ ետք կ'ընկնեն հասկնաւոր Պատանեկանի իմաստը, ստանալով դաստիարակութիւն ու սորվելով Հ.Յ.Դ.-ի ու Հայ Դատի մասին: Հետգիտել թրծուելով պատանեկան շարքերէն, պատանիին մէջ կը զօրանայ հայու հոգին, ու կը պատրաստուի ծառայելու իր ազգին իբր ապագայ Հայ Դաշնակցական: Պատանեկան մաւն մեծ դեր կը կատարէ պատանիներուն Հայապահպանման համար մանաւանդ այս օտար ափերուն վրայ:

Սակայն, 16 տարեկան երիտասարդ դառնալով ու փոխանցուելով Երիտասարդաց, կը փոխուի պատանիին դերը: Այլեւ չի բաւեր մտիկ ընել ու սորվիլ Հայ Դատի պատմութեան ու աշխատանքներու մասին, այլ Հ.Յ.Դ.-ի երիտասարդը գործօն աշխատանքի կը մղուի Հայ Դատի ու Յեղասպանութեան ճանաչման համար: Այս պատճառով է որ ես կ'ընտրեմ հաւատամ որ ամէն պատանի անհամբեր կը սպասէ փոխանցուելու Երիտասարդաց, որպէսզի սորված գիտելիքները կրնայ գործածել ու իրականացնել: Երիտասարդացէն մէկ աստիճան ես կը բարձրանամք Հ.Յ.Դ. շարքերը ու կը պատրաստուինք ըլլալ հայ ժողովուրդի ապագա ղեկավարները: Ատոնք են իմ անկնկալութիւններս Երիտասարդացէն, ամէնէն կարեւորը ըլլալով այն, որ փոխանցուելով հոն, խաղը վերջացած կ'ըլլայ ու անելի լուրջ աշխատանքը կը սկսի Հայ դատին ու Հայ ժողովուրդին համար:

Տաթև Բեքինեան

«Քրիստափոր Միքայէլեան», Թորոնթո

«Քրիստափոր Միքայէլեան»

Ես, իբր Քրիստափոր Միքայէլեան Մասնաճիւղի վարչական անդամ շատ ուրախ եմ որ մաս կը կազմեն Թորոնթոյի Հայ պատանեկան խումբին: Ամէն Ուրբաթ օր, հայ պատանիները քով քովի գալով, դաշնակցական երգեր երգելով եւ զանազան դաստիարակչական նիւթերու հետեւելով, մենք կ'սորվինք Հայ Յեղափոխական շարժման եւ ստեղծման մասին: Հայ Պատանեկան միութիւնը մեզի կը պատրաստէ դառնալու ապագայ դաշնակցականներ:

Գալ տարի, երբ ես մաս կազմեն Սիմոն Զաւարեան Երտասարդական մասնաճիւղին, կը յուսամ որ մօտէն տեղեակ կ'ըլլամ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան բոլոր տեսակի գործունէութեանց, Հայ Դատ աշխատանքներուն, ներկայի տարուած գործունէութեան եւ ապագայ ծրագիրներուն մասին:

Ծովակ Առաքելեան

«Քրիստափոր Միքայէլեան», Թորոնթո


WE MUST BE PREPARED...

Preserving my Armenian culture and heritage remains my number one concern and priority as an Armenian youth living in the Diaspora. Knowing that I have a strong support system of many Armenian youth who share the same dedication to the Armenian Cause makes the ongoing battle against assimilation a little easier. I feel proud to consider myself a member of the A.R.F.J.O.C., an organization that allows not only for me to socialize with Armenian youth in my age group, but also assists in the understanding of who I am and where I came from.

Next year, when I am transferred to the A.R.F.Y.O.C., I expect to be a part of an equally friendly atmosphere. However, it is important to realize that upon becoming a member of A.R.F.Y.O.C., I should be trained to take on the pressures of becoming a future cultural or social leader in my community. It is critical to enforce the reality that as Armenian youth, it is our duty to preserve the cultural traditions and morals that we were taught, in order to be able to pass them on to the future generations. Any chance of our community's survival is a heavy burden on our shoulders, one that we must be prepared to overcome at any cost.

Carolyn Jakujyan

"Kristapor Mikaelian"- Toronto



ՊԱՏՐԱՍՏՈՒԵՑԷՔ՝



ՀԱՅԱՍՏԱՆԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

2004



Յաջողութիւն «ԱՐԾԻԻ» Պաշտօնաթերթին՝

Հաւալի Ս. Գէորգ Հայաստանեաց

**Առաքելական Եկեղեցւոյ
Հովիւ եւ Հոգաբարձութիւն**

Rencontre avec

Mme Michelle Courchesne

La ministre provinciale de l'immigration et de relations avec les citoyens, Mme Michelle Courchesne, en collaboration avec ses collègues, a convoqué les représentants des organisations et des communautés ethniques à une réunion. Cette réunion a eu lieu le 25 août 2003, au centre Administratif du Québec situé à Laval. La délégation du Centre communautaire arménien de Laval, constituée des représentants du Comité Nationale arménien du Canada, du Comité National arménien de Laval et du F.R.A., organisation de la jeunesse arménienne du Canada, a participé à cette réunion. Parmi les autres participants se trouvaient plus de vingt organisations communautaires et sociales, telles que "Entraide", "Carrefour d'interculturelles de Laval", "Centre d'intégration sociale et professionnelle de Laval". Des délégués des communautés grecque, italienne, espagnole, haïtienne, arabe, portugaise, etc., ont aussi apporté leur participation. La réunion a débuté avec un message de bien-

venu de madame Michelle Courchesne. Ensuite, elle a passé aux sujets dont elle voulait que les représentants des organisations discutent. Madame Courchesne a précisé le but de cette rencontre et elle a insisté sur l'importance d'échanger des idées sur certains sujets. Elle voulait redéfinir le niveau d'immigration au Québec, et pour ce faire, elle ressent le besoin de déposer un plan d'action pour s'assurer qu'elle et ses collègues aient tous les outils pour faire de l'immigration un élément important du Québec.

Les sujets dont les membres du conseil ont longuement discutés relèvent des thématiques suivantes : les relations interculturelles, l'intégration, la pleine participation et l'immigration. Les représentants ont chacun eu leur tour pour s'exprimer à propos de certains problèmes concernant les nouveaux arrivés au Québec qui éprouvent de la difficulté à s'intégrer, de se trouver un emploi et d'apprendre la langue française, la langue officielle du Québec.



Mme Courchesne,
ministre de l'immigration
et de relations avec
les citoyens, avec
la délégation Arménienne



Les KEMagans
avec le MNA
de Laval
des Rapides,
Mr. Alain Paquet

L'échange d'idées entre les membres du conseil a été long mais effectif. Beaucoup de moyens ont été proposés dans le but de corriger et d'améliorer la situation des immigrants fraîchement arrivés. Ceux-ci ne sont pas capables de se trouver un emploi parce qu'ils ne maîtrisent pas les langues française et anglaise, ce qui les empêche de s'intégrer à la société québécoise dans un nouveau pays qui diffère beaucoup de leur pays natal.

Bien qu'il y aura d'autres rencontres, cette première a permis de placer les bases du plan d'action. Ce plan d'action sera axé sur l'apprentissage et la maîtrise de la langue française dans un aspect interculturel. Par interculturel, on entend mixité et diversité. L'apprentissage du français dans les pays d'origine a été un moyen proposé qui a reçu l'approbation de chacun des membres du conseil car tous pensaient que cela faciliterait l'adaptation des nouveaux immigrants à la réalité du Québec, aux nouveaux systèmes et à l'environnement du marché du travail.

Au cours de la discussion et de l'échange des idées les représentants du Centre communautaire arménien de Laval ont bien informé Madame Courchesne des affaires qui préoccupent la population arménienne du Québec et notamment celle de Laval. Ils ont suggéré des mesures distinctes qu'il faudra prendre afin d'aider les nouveaux immigrants arméniens, bien qu'il n'y en ait pas beaucoup. La ministre les a acceptés avec plaisir et a conseillé les représentants de lui remettre un dossier expliquant le projet plus en détail à la prochaine rencontre.

MARIA DOLMAJIAN



Հանդիպում Քեպլեք Նահանգի Մշակույթի

և Ներգաղթի Նախարարուհիին հետ

Երկուշաբթի Օգոստոս 25 -ին, Լաալի Centre Administratif du Quebec հաստատության մէջ, տեղի ունեցաւ առաջին հանդիպումը Մշակույթի և Ներգաղթի նախարարուհի Տիկին Միշէլ Քուրշէնի հետ: Ժողովին ներկայ կը գտնուէին զանազան բարեսիրական միութիւններու պատասխանատուներ ինչպէս նաեւ այլ գաղութներու ներկայացուցիչներ: Հայ գաղութը կը ներկայացնէին ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ ընկ. Մհեր Գարագաշեան, ՀՅԴ ԳԵՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ ընկ. Զաւէն Տէր Սահակեան, Լաալի ՀՅԴ ԳԵՄ «Բեկոր Աշոտ» մասնաճիւղի վարչական անդամ ընկ. Մարիա Տօլմանեան և ՀՅԴ ԳՊՄ Լաալի Գետաշէն մասնաճիւղի վարիչ կազմէն ներկայացուցիչ ընկ. Թալին Ապրաքեան:

Իր բացման խօսքին մէջ, Տիկին Քուրշէն շեշտեց համագործակցութեան կարեւորութիւնը, ապա հրաւիրեց մասնակցողները որ բացայայտօրէն արտայայտուին իրենց միութիւններու առջեւ պարզուած դժուարութիւններուն մասին: Ժողովին բուն նպատակն էր ուսումնասիրել Քեպլեքի նորագաղթ ընտանիքներու հաստատման միջոցները և գտնել լուծումներ դիւրացնելու անոնց նոր կեանքը: Գաղափարներու փոխանակումը եղաւ արդիւնաբեր: Ընդհանրապէս, բոլոր միութիւնները համաձայն էին որ դժուարութիւններ կային ֆրանսերէն լեզուի գործածութեան, գործի, ասպարեզի և միջավայրի, նոյնիսկ այն ներգաղթողներուն համար որոնք ունէին բարձրագոյն վկայականներ: Իսկ ինչ կը վերաբերի հայկական գաղութին, Տիկ. Քուրշէն համաձայն էր որ յատուկ ձեւեր պէտք է գտնել օժանդակելու նոր հաստատուող հայ ընտանիքներուն, որովհետեւ կազմակերպուած կառույցներ արդէն իսկ կան (ինչպէս Հ.Օ.Մ.-ը): Ժողովի ասարտին, Տիկ. Քուրշէն և իր պաշտօնեաները հրաժեշտ առին նախ շնորհակալութիւն յայտնելով ներկաներուն իրենց մասնակցութեան համար, ապա խոստանալով գործնական արդիւնքներ մինչեւ յաջորդ հանդիպում:

Կեանքիս Ուխտը

Գրասեղանիս առջեւ նստած, խոր մտածումներու գիրկը ինկած, պատմութեան դասագիրքս մէկ կողմ դրած, մտածումներու աշխարհիմ մէջ ինկած էի. ես Յակոբ Մխիարդիեանն եմ. կար ժամանակ մը, որ Թորոնթօ կը բնակէի, իսկ հիմա՝ ոչ: Ամէն բան փոխուած է: Ունիմ անձնական հեռաձայնս, բնակարանս... ամէն ինչ իմա է: Ի՞նչ եղաւ, ե՞րբ մեծցանք, ե՞րբ սկսանք մեր աղտոտ հագուստները լուալ, ճաշ պատրաստել... ներողութիւն, պիտի ըսէի տաքցնել աւելի քան եփել:

Կարծես քամին այս կողմ փչեց զիս, դէպի Լոնտոն, որ երբեք հայ կոչուած բանէն լուր չունի, սակայն Գանատայի լաւագոյն համալսարաններէն մին, University of Western Ontario-ն հոս կը գտնուի:

Եթէ փնտռելու ելած էք զիս, Հայաստան չեմ գացած եւ աւելի ճիշդը պանդուխտ դարձած եմ մեր փոքրիկ Հայաստանէն՝ Թորոնթօ, Գանատա:

Համալսարանական երկրորդ տարեշրջանիս սեմին եմ: Կը պատրաստուիմ ամբողջանել տարեշրջանը՝ քաղաքականութեան եւ համանահանգային յարաբերութիւններու BA-ի վկայականով, եւ ապա, շարունակել կամ՝ փաստաբանութիւն ուսանելով եւ կամ նոյն մասնագիտութեան մէջ վկայուելով որպէս մագիստրոս:

Պանդխտութեան այս զգացումներուս ընդմէջէն, նմանութիւն մը անցաւ մտքէս: Թէեւ անոնց հարցը աւելի բարդ էր, սակայն Լիբանանէն կամ այլ երկիրներէ գաղթած հայերու զգացումները կարծես կը կրկնուին: 1970-ական թուականներու սկիզբին, երբ հայերը սկսան գաղթել դէպի Ամերիկաները, յաճախ չգտան եկեղեցի եւ կեդրոն իրենց ապահոված վայրերէն ներս: Ոչ իրենց սովորական գաղութային կեանքը գոյութիւն ունէր, ոչ ալ այն լայն ընտանեկան եւ ընկերային յարաբերութիւններու շրջանակը, որոնք հաւանական առաւելութիւններ էին այդ արաբական երկիրներուն մէջ:

Ես ալ այս նոյն դժուարութիւններուն ենթարկուեցայ, երբ Լոնտոնի համալսարանը սկսայ յաճախել: Լեզուս սահմանափակուած էր ծնողքիս եւ հայ ընկերներուս հետ իմ ունեցած հեռաձայնային խօսակցութիւններու մէջ միայն: Եւ կամաց-կամաց նկատեցի որ խօսակցութիւնս ալ սկսած է դժուարանալ: Ծնողներուս հայերէն խօսակցութեանս եւ հարցադրումներուն կը պատասխանէի միայն «լաւ եմ», «այո», «լաւ կը ճաշեմ», «դասերս կը դժուարանան» բառերով...

իսկ ամէնէն շատ գործածուած նախադասութիւնս «Թորոնթոն կարօւոցայ»ն էր:

Նեղացուցիչ նախադասութիւններ:

Նոյն այս դժուարութիւններուն կը հանդիպինք նաեւ՝ երբ կը փորձենք լուծում մը գտնել եւ գործնական քայլեր առնել, Օնթարիոյի մէջ գտնուող, եւ ինչու չէ նաեւ Վանգուվըրի մէջ գտնուող այն փոքրաթիւ գաղութներուն համար, որոնք հեռու են հայ լեզուէն: Լայն թափով սկսած եւ կեանք առած, աշխոյժ գաղութներ էին Գէմպրիճը, Ալենթ Գաթրինգը, Համիլթընը եւ Ուինձըրը, բայց դժբախտաբար այնքան կանգուն չեղան հայապահպանման եւ միութենական իրենց այս սիւները, որոնք աշխատանքով միայն մէջտեղ եկան:

Երիտասարդը մթնոլորտ կը փնտռէ եւ զայն կը փոխէ համաձայն իր նախընտրութիւններուն: Ներկայ հայ երիտասարդներու իրավիճակը այսպէս է: Անդադար մթնոլորտ կը փնտռենք ուրիշներու նման: Ապրելակերպ մը, որ խոչընդոտ է գաղութի մը ապագայ ղեկավարներ պատրաստելու գործին մէջ:

Անկարելի է, որ մեր երիտասարդներուն կողմէ տարուած ամէն աշխատանք ըլլայ բացառիկ, նոյնիսկ Թորոնթոյի պէս գաղութի մը մէջ: Աշխատանք մը պայմանաւորուած չէ գաղութի մը թիւով, այլ որակով: Առայժմ ես կը բնակիմ փոքրաթիւներէն ամէնէն փոքրաթիւ գաղութին մէջ: Մեր գաղութը տասը համալսարանական աշակերտներէ կը բաղկանայ: Նոյն ծարաւը ունիմ՝ ազգի, կեդրոնի, եկեղեցիի եւ գաղութի: Այս իրավիճակիս ընդմէջէն, փոքրաթիւ գաղութներու մէջ գտնուող ընկեր-ընկերուհիներուս նոյն ունեցած ծարաւը ես ալ կը զգամ:

Բայց, չեմ յուսահատած. հայ մշակոյթի միակ ապաւէնը հայ մթնոլորտը չէ այլ մեր թափած ջանքն է: Հայու ոգին միակ տունն է հայուն:

Ես այդ ոգին իմ առօրեայիս մէջ, ոչ միայն կ'օգտագործեմ, այլ իր ներկայութիւնը զգալի կը դարձնեմ իմ շրջակայքիս, որովհետեւ՝ այդ իմ քրիստոնեայ անձս է, ահա՛ կեանքիս նշանաբանը:

Չեմ ուզեր եւ պիտի չձգեմ, որ այն հայաժայթը դաստիարակութիւնը զորս ծնողներս տուին ինձի, այն կրթութիւնը զորս


ուսուցիչներս ջամբեցին եւ այն արժանապատուութիւնը զորս գաղութի մեր ղեկավարները փոխանցեցին կորստի ու մեռնի իմ մէջ:

«Ուր էլ լինես, այս լուսնի տակ ուր էլ գնաս, թէ մօրդ անգամ մտքիցդ հանես, քո մայր լեզուն չմոռանաս»:

Ուր ալ ըլլամ, այս լուսնի տակ ուր ալ երթամ, ո՛չ հաւատքս, ո՛չ մայրս, ո՛չ ազգային արժանապատուութիւնս եւ ո՛չ ալ լեզուս պիտի մոռնամ:

ՅԱԿՈԲ ՄԻՍԻԱՐԴԻՆԵԱՆ

«Սիմոն Զաւարեան» մասնաճիւղ – Թորոնթօ





Entertainment

Toronto Gets What it Wants from the Rolling Stones

By Hovig Vessoyan

"Aram Manougian" Chapter, Cambridge

It was only Rock 'n' Roll but Toronto loved it! The Rolling Stones, one of rock music's greatest bands helped bury the SARS virus that had hit the city with the biggest concert in Canadian history on July 30th.

Four hundred and fifty thousand fans packed and rocked Downsview Park during the 11-hour marathon, which featured 15 acts.





The Stones hit the stage at approximately 10:30 p.m. and opened their performance with the song "Start Me Up." They entertained the Toronto faithful with other tunes including "Satisfaction," "Sympathy for the Devil," and "Jumpin' Jack Flash" throughout their 90 minute set. The set also featured collaborations with pop star Justin Timberlake and Angus Young, guitarist for AC/DC.

If you're a rock music fan then SARSTOCK was the place to be. Also on the bill were the after mentioned AC/DC as well as Canadian musicians, Guess Who, Rush, Sam Roberts and the Tea Party.

Young delighted the fans with his guitar solos. There was Brian Johnson of AC/DC almost busting his vocal cords while singing "Thunderstruck"; Burton Cummings bringing back some memories with the Guess Who's hit single "American Woman";

Timberlake had bottles of water thrown at him from the AC/DC fans that were meters from the stage - good thing concert organizers didn't allow umbrellas at the concert. And yes, how can we forget Mick Jagger? On stage he wore a velvet robe and showed no signs of slowing down after four decades of living the rock 'n' roll lifestyle.

Hundreds of music enthusiasts began camping outside the park a day or two before the show to increase their chances of getting a prime seat for the concert. The gates to the park officially opened at 8 in the morning of the show. Those who got in before noon were treated to a breakfast courtesy of the Stones.



By 11 a.m. it was virtually impossible to find a place to set up shop that was anywhere close to the massive stage. The performers looked like ants on pavement from where many of us were located on the Downsview grounds. Binoculars and television screens were set up inside the park, which allowed the less fortunate get the full concert experience.

It wasn't easy getting around the park for bathroom breaks and snack fixes. You were forced to walk gingerly through the maze of blankets and bodies to avoid stomping on bare toes, loafing hands, potato chips or new Rolling Stones bandana. The lineups at the concessions stands were totally unbearable. Try waiting two hours for beer or hotdogs. That was a part-time job in itself.

Event organizers and fans couldn't have asked for better weather on show day. Sunny skies gave way to temperatures hovering around the 30-degree mark for the better part of the day. A perfect day to work on your tan.


But heat exhaustion and dehydration were a problem for some. Nearly 200 spectators were treated for heat related illnesses.

The Stones arrived in Toronto, one of their favorite cities in the world, and wanted to help their friends get over their dire straits. They helped put Hog Town back on the map for all the right reasons. They attracted tourists from all over the globe. Tourists came without fears of catching SARS.

The show is all over now, but for the half million fans that were at Downsview Park on this special day the memories will not fade away.

INTERESTING FACTS:

- 227,124 liters of ketchup, mustard and relish were available.
- 1,550 Kilometers of toilet paper.
- Collective age of the Rolling Stones: 278
- 9 a.m.: the time of the first arrest for assaulting a police officer.




Յարութ Պետրոսեան եւ Նուագախումբ

- Նշանտուր
- Հարսանիք
- Կնունք
- Խրախճանք

Հայկական եւ միջազգային երգերով կը
ճոխացնէ ձեր բոլոր ուրախ առիթները:

Հեռ. 416-616-4814

Ե-Գամակ. harout.bedrossian@sympatico.ca



DIKO *motours* INC.

**Pièces d'autos
usagées**

85, Saulnier
Vimont - Laval
(Québec) H7M 1S9

Tél. : (450) 669-6699
Fax.: (450) 669-0211
Sans frais : 1-866-559-6699

KRIKOR MAROUNIAN



Ձեր ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ
ԲՈԼՈՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ
ԵՒ ԿԱՐԻՔՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ
ԴԻՄԵՑԷՔ՝

ԳՐԻԳՈՐ ՄԱՐՈՒՆԵԱՆԻՆ



CANADA LIFE
INSURANCE COMPANY



TRANSAMERICA
INSURANCE & INVESTMENTS


FOR FINANCIAL NEED ANALYSIS IN

- LIFE INSURANCE - PERMANENT & TERM
- RRSP AND PENSION PLANS
- INCOME REPLACEMENT PLANS (Disability insurance)
- EDUCATIONAL PLANS FOR YOUR CHILDREN
- EMPLOYEE BENEFIT PLANS (Group insurance)
- MEDICAL INSURANCE FOR VISITORS AND CANADIANS TRAVELING ABROAD.

KRIKOR MAROUNIAN

Cell.: (514) 927-2666 - Rés.: (514) 332-7021 • Fax: (514) 332-7376

TOP TEN



by Lori Avakian - "Simon Zavarian" chapter (Toronto)

How can you tell you're a REAL ԳԵՄական ...

- 10 You've known the words to Մշակ Բանուոր and Մեր Հայրենիք since you were 5 years old, but you still forget the words to Oh Canada.
- 9 You don't know what it is, but you feel uncomfortable when you're around Ռ--կավարճ and Հ----եանք.
(Not to be too obvious, fill in the blanks yourself)
- 8 You tremble with fear at the words կեդրոնական վարչություն and կոմիտե.
- 7 You think the կուսակցություն is one big fraternity.
(the initiation, the acceptance, the brotherly love and the closed-door)
- 6 Your Armenian isn't that good but you know and understand phrases like «լուսաբանական հարցում», «ըստ կարգի», and «ըստ էության».
- 5 You know Վահան Աճեմեան and dread ընդհանուր and պատգամատրական ժողով.
(Your suggestions are great Vahan Really!)
- 4 You still have hope the Ardziv will one day soar again.
(I'm not talking about the bird, if you know what I mean!)
- 3 It's not բանակում, it's սեմինար.
- 2 Being a պահակ and playing "capture the flag" are serious things.
(punishments range from skipping breakfast to cleaning toilets)
&&&&&& the #1 reason you can tell you're a REAL ԳԵՄական....
- 1 You've got the ԳԵՄ jacket to prove it!

VODKA LEMON

27 տարի է ի վեր, ամեն տարի Թորոնթոյի մէջ ֆիլմաշխարհի մեծ փառատօններէն մին կը կատարուի, "Toronto International Film Festival"ը: Աշխարհի չորս կողմերէն, արուեստագէտ բեմադրիչներու ֆիլմերը կը ցուցադրուին հոս, որոնք ընդհանրապէս սրահներու մէջ չեն ցուցադրուիր կամ առիթ չենք ունենար տեսնելու:

Այս տարի բախտաւորութիւնը ունեցաւ նման հետաքրքրական ֆիլմ մը տեսնելու: Իրաքցի քիւրտ բեմադրիչի մը ֆիլմն էր, "Vodka Lemon" անունով: Ֆիլմի ամփոփ բացատրութիւնը մեզ կ'առաջնորդէ անկախացած Հայաստանի գիւղ մը: Բայց ֆիլմը դիտելէ վերջ բացալայտ է որ հայ կեանքի հետ առնչութիւն չունէր: Հայաստանի քիւրտ փոքրամասնութեան այս օրերու կեանքն էր: Հոգեբանական-իրապաշտ վերի վայրումներով:

Քիւրտ մարդու մը պատմութիւնն է, որուն մանչ զաւակներէն մէկը գաղթած է Ֆրանսա իսկ միւսը անշնորհք գինովի մը հետը կ'ապրի: Հայրը իր Ֆրանսա գաղթած զաւակէն նիթական օժանդակութիւն

կ'ակնկալէ, որ դժբախտաբար չ'ստանար: Դժբախտութեամբ տառապող եւ կինը կորսնցուցած այս մարդուն կեանքը յանկարծ կը լեցուի երբ գերեզմանատան մէջ կը հանդիպի Ղարաբաղեան պատերազմի զոհուած ազատամարտիկի մը կնոջը:

Բեմադրիչը, Հիւններ Սալիմ, բացալայտօրէն ճիշդ թափած է ցոյց տալու ներկայ քիւրտ ընտանիքի մը կեանքը: Դժբախտաբար քաղաքական պատճառներով ֆիլմը Իրաքի մէջ չէ կրցած պատրաստել, այլ պատրաստած է զայն Հայաստանի մէջ:

Գեղեցիկ տեսարաններով, արուեստագէտի նուրբ ճաշակով պատրաստուած այս փոքրիկ ֆիլմը հաճուքով վայելեցի: Բախտաւոր ենք որ Թորոնթոյի փառատօնին ներկայացուեցաւ այս ֆիլմը: Ցանկալի պիտի ըլլայ որ նաեւ ցրուեն սրահներուն մէջ:

ԼՈՐԻԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ
«Միմոն Զաարեան» մասնաճիւղ - Թորոնթօ

Նուիրատուութիւններ «ԱՐԾԻԻ» Բացառիկին

100.00\$ Նուիրատուութիւն

Տէր եւ Տիկին
Վահէ եւ Անթուանէթ Երէցեան
Տոքթ. Պարոյր Թովսմանեան
Տէր եւ Տիկին Մովսէս Քեօսէեան
Տոքթ. եւ Տիկ Ռուբէն եւ Անի Պետրոսեան

60.00\$ Նուիրատուութիւն

Տիկ. Սիրվարդ Փանոսեան

50.00\$ Նուիրատուութիւն

Ընկ. Պետրոս Գաբրիէլեան
Ընկ. Լեւոն Եաղճեան

40.00\$ Նուիրատուութիւն

Ընկ. Վրէժ Արմէն Արթինեան

20.00\$ Նուիրատուութիւն

Ընկ. Սերոբ Կիրակոսեան
Ընկ. Հրաշ Գարայեան
Ընկ. Նազօ Խաչիկեան
Ընկ. Յակոբ Լախոյեան
Ընկ. Նորայր Պեզճեան
Տիար Շորճ Պասմաճեան
Ընկին. Ալիս Դաւիթեան
Տիկ. Անահիտ Գույումճեան
Տիար Վազգէն Տէր Գալուստեան
Տիար Յակոբ Մանուկեան
Ընկերունի մը

10.00\$ Նուիրատուութիւն

Ընկ. Նարեկ Նիկոլեան
Ընկ. Շանթ Տէր Ադամեան
Պրն. Յովիկ Թահանեան

Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ. «Արծի» պաշտօնաթերթի խմբագրական կազմը կու գայ իր խորին շնորհակալութիւնները յայտնելու՝ Ընկ. Մհեր Գալուստեանին եւ բոլոր անոնց, որոնք իրենց բարոյական եւ նիւթական օժանդակութիւնը բերին «Արծի» Բացառիկի հրատարակութեան:

Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ.
«Արծի» Պաշտօնաթերթի
Խմբագրական Կազմ

ARF YOC Chapters

Head Office

• A.R.F. Y.O.C.

Central Executive

3401 Olivier Asselin
Montreal, Quebec H4J 1L5
(514) 331-6548

ce@arfyc.org
www.arfyc.org

• Vancouver

Arshavir Shiragian Chapter

13780 Westminister Hwy.
Richmond, B.C. V6V 1A2
(604) 276-9627

• Hamilton

Ararad Chapter

191 Barton Street East
Stoney Creek,
Ontario L8E 2K3
(905) 662-2520

• Cambridge

Aram Manoukian Chapter

15 International Village Dr.
Cambridge, Ontario N1R 7M5
(519) 623-4812

• Windsor

Keri Chapter

705 Pierre Street
Windsor, Ontario N9A 2K5
(519) 256-1082

• Montreal

Levon Shant Chapter

3401 Olivier Asselin
Montreal, Quebec H4J 1L5
(514) 331-5561
levonshant2000@hotmail.com
www.levonshant.org

• Laval

Pegor Ashod Chapter

397 Blvd. Des Prairies
Laval Des Rapides,
Quebec H7N 2W6
(450) 688-7460
pegorashod@hotmail.com

• Toronto


Simon Zavarian Chapter

45 Hallcrown Place
Willowdale, Ontario M2J 4Y4
(416) 491-2900
arfyc_sz@hotmail.com

• St-Catharines

Haratch Chapter

156 Martingdale Road
St-Catharines, Ontario L2S 2X9
(905) 682-6178



70-00-07

AYF
70th



REAWAKEN
THE REVOLUTION